Дмитриевъ
Фридманъ
Якубъ

9(47.925)
Д-27

1917

ՆԻՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

05 OCT 2011

№ 2.

29

ՎԱԽԵՐԱԳՐԵՐ ԳԱԽԱՌԱՊԵՏԻ ԴԻՒԱՆԻՑ

Հրատարակութիւն
«ԱԶԱՏԱՄԱՐՏ»-Ի

9(47.925)
Ч-27

Տպարան «ԱՇԽԱՏԱՒՈՐ»
1917

ՆԻԿԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ն (97-925)
Ի-27

№ 2.

ՎԱՒԵՐԱԳՐԵՐ ԳԱՒԱՌԱՊԵՏԻ ԴԻՒԱՆԻՑ

ՀԱՅ ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСРА Публичная библиотека
7/XI-1922
ИМОННА, Москва и на
Ա. Ա. ԱՍԼԱՆԻ ԱՆՎԱՆ

Հրատարակութիւն
«ԱԶԱՏԱՄԱՐՏ»-ի

Թիֆլիս
Տպարան «ԱՇԽԱՏԱՆՔԻՈՐ»
1917

08.08.2013

Այս վաւերագրերը, որ լոյս են տեսնում սորա, գտնւել են Խնուս գաւառի Խալիլ-չաւուշ գիւղում, երբ Քաղաքների Միութեան մարդիկ, որ գործում էին այդ շրջանում՝ Ռուբէն Տէր Մինասեանի գլխաւորութեամբ, ցորեն էին որոնում գիւղի հորերում։ Դեղնած թերթերի այդ կապոցը, որ թաղուած է եղել հողում, նոյն Խալիլ-չաւուշ գիւղախմբի պետի դիւանն է, որ պաշտօնական վաւերագրերով մեզ պատկերացնում է գաւառական մի խուլ անկիւնի կեանքը պատերազմի ընթացքում։ Պէտք է ենթադրել, որ գիւղապետը թաղել է այդ թղթերն ու հեռացել նահանջող զօրքի հետ, երբ ռուսները գրաւել են Խնուսը։ Խալիլ-չաւուշ գիւղը գտնւում է Խնուսից հարաւ։

Վաւերագրերի մի մասը անմիջապէս վերաբերում է հայերին, նրանց տեղահանութեան, կոտորածին և ինքնապաշտպանութեան. միւս մասը գծում է գաւառի պատկերը, գաղթական թիւրքերի վիճակը և այլն։ Վաւերագրերը թարգմանել է Դ. Փափազեան։

Ն. Ա.

№ 11111
286

№ 1 Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսչին

Պր. տեսուչ!

Խնուս գիւղաքաղաքացի Խաղխազեան պր. Միսակ մեզ դիմելով յայտնել է, որ Քաղքիկ գիւղացիների՝ իբր պատերազմական տուրք տուած 9000 օխայ յարդը և 5100 օխայ խոտը, ինչպէս նաև մէկ ձին իր սեփականութիւններն են. ուստի յանձնարարում ենք քննութիւն կատարել՝ ստուգելու համար իրողութիւնը։

11 Ապրիլ 331 Խնուսի գաւառապետի փոխ.
(1915) (ստորագրութիւն)

№ 2 Շիւբրի չաւուշին (ի Տոդտափ գիւղ)

Թէփէ-քէօյի 3 սայլերը եկան. շնորհակալ եմ ձեր հոգատարութեան համար. եղներն էլ սայլերի տէրերինն են եղել. հետևաբար, եթէ եղներն էլ վերցնելու լինենք, միայն սայլի տէրերն են վնասւելու. սրանք թէ սայլ տան և թէ եղները առնւին. ինչու միւս գիւղացիները բացառութիւն համարւեն. դա արդարութիւն չէ. յարգելով այս սկզբունքը, եղները վերադարձրի տէրերէին. միայն թէ ջանք թափեցէք մնացած երեք սայլերն էլ յամենայն դէպս բռնութեամբ առնել ձեռքերից։ Մխիթէսարիի բէյը արդէն հրամայել է չը տուողներից բռնի կերպով խլել, իսկ հակառակորդներին Մուշ ուղարկել, հետը ուղարկելով նաև տեղեկա-

գիրը։ Դուք էլ այդպէս արէք. վստահ եմ, որ ձեր ջանքերի շնորհիւ յիշեալ սայլերն էլ շուտով ձեռք կը ձգենք։ Տողոտափէն 2, Այնթապէն 2 և Զէրնիկէն 3 սայլ առէք։ Զէրնիկը թէև նախապէս 4 սայլ տուել էր, բայց, հասկցելով որ շատ հին և անպէտք էին, վերադարձուեցին. այս անգամ դարձեալ այն հիները չը տան. արդէն ձեր շնորհքը, ջանքը և հնարամտութիւնը թոյլ չի տալիս, որ վատ բաներ տան ձեզի։ Վստահ եղէք, որ երբ այս սայլերի գործը վերջանայ, պիտի գրեմ Միթէսարիֆ էֆէնդին և ձեզ համար գնահատութիւն պիտի խնդրեմ։

23 սեպտ. 330 (1914) — Խնուսի գաւառապետ Շէվկի

Մասնաւոր, № 657
№ 3 (Պատճէն)

Հասկացուում է, որ մի կարգ մահմեդականներ դաղտնաբար հայերին պահում են այն գիւղերում, որտեղերից նրանք հեռացած են։ Պէտք է այդպիսիների տները այրել և իրանց էլ իրանց տների առաջ կախաղան բարձրացնել, որովհետև համարձակւում են հակառակ կառավարութեան որոշումներին հայերին պահել ու պաշտպանել իրանց տներում։ Այս հանգամանքը յարմար ձևով հասկացրէք՝ որոնց որ պէտք է. դրա հետ մէկտեղ ուշադրութիւն դարձրէք, որ ոչ մի հայ չմնայ և ձեր գործառնութիւնները պարբերաբար հաղորդեցէք մեզ։ Մահմեդականութիւն ընդունող հայերն էլ պէտք է տեղահանուեն։ Եթէ հայերին պաշտպանութիւն ցոյց տուողները զինուորականներ են, իսկոյն

պէտք է իմաց տալ վոխանորդներին և հեռացուեն զինուորական պարտականութիւններից, որպէս զի վերջը դատուին. իսկ եթէ քաղաքային պաշտօնեաներից են, անմիջապէս պաշտօնանկ անել և դատելու համար յանձնուեն պատերազմական տեսչներին։

Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսչին

Պրն. տեսուչ!

Վերևը հաղորդեցինք ձեզի կուսակալութեան 12 յուլիս 331 (1915) թիւ և № 512 ծածկագիր գրութեան պատճէնը, որ կազմում է III զօրաբանակի հրամանատարի ազդարարութեան վրայ, ժողովուրդին յայտնեցինք, որ հայերին իրենց տներում պահող և պահպանողները պիտի կախուեն իրենց տների առջև և տուներն էլ պիտի վառուեն։ Բացի այս, ձեր գիւղախմբի մէջ ինչքան հայեր որ կան, բոլորը հաւաքեցէք և ուղարկեցէք և տեղահանութեան մասին պարբերաբար տեղեկութիւն տուէք։ Թոյլատրութիւն և թուլութիւն ցոյց տուողները հրամայւած պատժին պիտի ենթարկուեն. վերջնականապէս յայտնում ենք, որ երկրի և ազգի ապահովութիւնը այդ է պահանջում։

18 յուլիս 331 (915) — Խնուսի գայմագամ Էմնէմ

№ 11102/280
№ 4 (Պատճէն)

Զինուորական կայանների զինուորական և քաղաքային պաշտօնեաները, ծառայութեան և պարտակա-

նութեան բարձր կատարման գործում պատասխանատու են. հետևաբար պաշտօնեաների գտնուած վայրում և կամ իրանց բնակարաններին կից գտնուող պետական և մասնաւոր շէնքերում պէտք է մշտական քննութիւն կատարուի, հասկնալու համար, թէ այդ տեղերը զէնքեր կամ ուրիշ զինուորական գոյքեր չկան. պէտք է ամեն միջոց ձեռք առնուի այդպիսի գոյքերը երևան հանելու համար և եթէ պէտք լինի, կարելի է դիմել տեղական կառավարութեան և խուզարկել մասնաւոր տները. ապացուցելու դէպքում պէտք է յանցաւորների անունները հաղորդել կայանների քննիչներին, որպէսզի օրինական հետևանքներ կատարեն։

Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսուչին

Կայանների քննչութեան 1 ապրիլ (331) 915 թիւ և № 93 թւակիր գրութեամբ ձեզ հաղորդում ենք, որպէսզի շարժուէք նրա տրամադրութիւնների համաձայն։

9 ապրիլ 331 (915) Խնուսի գայմագամի փոխ. Ապտիւլլահման

№ 5 Խնուսի գաւառապետարանի

№ 591
82

Վսեմ աէր!

Հայ Ջրաղացպանները, որոնք այժմ Ջրաղացներ

են բանեցնում, նրանց էլ պէտք է տեղահանել. խնդրում եմ յայտնել։

25 յուլիս 331 (915)

Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսուչ
Իբրահիմ հագգի
(կնիք)

Ջրաղացպաններն էլ պիտի ուղարկուին. բացի այդ՝ ձեր կողմերը—լեռներում, արտերում—ինչպէս նաև մի կարգ խայտառակ մարդկանց քով ապաստանած հայեր էլ կան, նրանց էլ ամենաուշ մինչև երկու օր պէտք է ուղարկել կենտրոնը։ Ցնայելով որ առաջ էլ գրել եմ, թէ գիւղախումբը պէտք է բոլորովին մաքրուի, այնու ամենայնիւ դեռ ոչ ոք չեկաւ. սրա պատասխանատուութիւնը շատ մեծ է. անապարանք և խստութիւն է հարկաւոր։

26 յուլիս 331 (915) Գայմագամ
(ստորագրութիւն)

№ 6 Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսուչին

Մասնաւոր, № 480.

Պարոն տեսուչ!

11-րդ զօրաբանակի հրամանատարը 16 մայիս 331 (915) թիւ հեռագրով բողոքում է, որ հեծեալ գունդին պատկանող աշիրաթ ալայների (համիդիէ) զինուորները չեն խրկուած իրանց տեղերը, այլ ծառայեց-

ում են Քեսփրի-քէօյում։ Այսպիսիներին ծառայեցնել՝ բոլորովին անհարմար լինելով, եթէ ձեր տրամադրութեան տակ կան այսպիսիներ, անմիջապէս ուղարկեցէք։ Եթէ իմացուի, որ ձեր մօտ թէկուզ մէկ հատ էլ գտնուած է այդպիսիներից, պիտի ենթարկուէք խիստ պատասխանատուութեան։

17 մայիս 331 (915) Խնուսի գայմագամի փոխ.

№ 7 (Պատճէն)

Հայերի տեղահանած վայրերում մի բոլէ առաջ գաղթականներ ուղարկել և բնակեցնել թէև սոիպոզական է, բայց յիշեալ գաղթականներից ոմանք չեն ցանկանում մինչև այս կողմերը ճամբորդել, ոմանք էլ ճանապարհին ոչէ պատրաստ և ուրիշ գտնելով ցրւում են էս ու էն կողմերը։ Այստեղ անհրաժեշտ կարիք կայ մի բոլէ առաջ գաղթականներ ուղարկելու և հետևապէս պէտք է առանց գաղթականների ցանկութեանը նայելու ուղարկել նրանց. հետևաբար փոխադրելու գործը կանոնաւորելու համար գրած է Պոլսի ոստիկանական տեսչութեան, որպէսզի այն ամենքը, որոնք հրաժարւում են որոշած գաղթավայրերը երթալուց, այդպիսիները ոստիկանութեան միջոցով փոխադրուեն մինչև Ծովափը կամ կենտրոնական կայանները. իսկ այդ տեղերից էլ գաւառների ոստիկանական տեսուչների դիտութեամբ և հսկողութեամբ փոխադրուեն որոշեալ վայրերը. ուստի սրանից յետոյ... (ասկից վերջ 3 տող չի կարդացւում, մասամբ մը ճեղքած լինելու համար)։

Գաղտնի է։ (Այստեղ գրած Խնուսի գայմագամի մակագրութիւնն էլ ճեղքած է)։

№ 8 Խնուսի գաւառապետութեան

№ 599/90

Վսեմ տէր!

Գիւղախմբի ոստիկանական պաշտօնեային եկած հրամանից հասկացւում է, որ գաղթականների վերադարձը յետաձգւում է մինչև սեպտ. 15-ը։ Ուստի խնդրում եմ իմացնել, թէ Բուլանըքի (որը այժմ թշնամու ձեռքում չի գտնւում), ինչպէս նաև մասամբ էլ Մանազկերտի գաղթականների վերադարձը յետաձգւի՞, թէ՞ ոչ։

10 օգոստ. 331 (915)

Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսուչ
Իբրահիմ հագգի

№ 9 (Պատճէն)

16 նոյ. 331 (915) թիւ և № 1012 շրջաբերականի յաւելուածն է.

Կայանների քննիչը յայտնում է, որ զօրամասերի և գիւղերի շրջանում գտնւող հարուստներ հայ փախստականներին պահպանում և աշխատեցնում են։ Կարդալով մարդոց՝ հայերի հանդէպ պաշտպանողական վերաբերմունք ցոյց տալը աննկարելի լինելով, պէտք է միջոցների դիմել այդպիսիներին երևան հանելու համար։ Յենելով III զօրաբանակի հրամանատարի ազդարարութեան վրայ, յայտնում ենք, որ հայերին

պաշտպանութիւն յայտնող մահմեդականները խիստ կերպով պիտի պատժւին։

№ 1228 Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսչութեան

Պարոն տեսուչ!

Կուսակալութեան 21 նոյ. 331 (915) թիւ և № 1045 գրութեան պատճէնը այսու ուղարկում ենք ձեզ, որպէսզի վարէք համաձայն նրա որամադրութեան։

28 նոյ. 915 Խնուսի գայմագամ (ստորագրութիւն)

№ 10 (Պատճէն)

III զօրաբանակի հրամանատարի հարցումի վրայ IX զօրաբանակի հրամանատարից ստացած գրութիւնից հասկացումէ, որ պատերազմական նախարարութիւնը պէտք չի տեսել զէնքի տակ առնել նրանց, որոնք թշնամու երկրից գաղթելով կամ փախչելով օսմ. երկիրն են եկել։ Ուստի յանձնարարւում է այդպիսիների հանդէպ ցոյց տալ համապատասխան վերաբերմունք։

№ 941 Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսչին

Վսեմ կառավարութիւնից հասած 9 սեպտ. 331 (915) թիւ և № 825 վերոյիշեալ հրամանը, որը վերաբերում է գաղթականներին, այսու հաղորդում ենք ձեզ։

Խնուսի գայմագամի անունից
Ժանդարմայի պետ՝ Ֆախրի

№ 11 Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսչին

№ 1162/613

Պրն. տեսուչ!

Բարձր կառավարութեան 1 յուլիս 331 թւակիր հեռագրի վրայ յայտնում ենք ձեզ, որ պարպւած գիւղերում տեղաւորւած գաղթականներից, տեղական երկրագործութեան մէջ անտեղեակ լինելու դէպքում, կարելի է վարպետներ ճարել և այդ կերպով ստեղծել տեղական երկրագործութիւն, ինչպէս նաև գտնւած այգիներն ու պարտէզները պահպանել և շէնցնել։ Վարպետների ծախքը պիտի հոգացւի գաղթականներին յատկացւած գումարից։

Խնուսի գայմագամ
4 յուլիս 331 (Ստորագրութիւն)

№ 12 Խալիլ-չաւուշ գիւղախմբի տեսչին

№ 582

Պրն. տեսուչ!

Ձեր 14 յունիս 331 թիւ և № 574/64 գրութեան պատասխանն է.

Կուսակալութեան հրամանով ձեր գիւղախմբի մէջ գտնւող բոլոր գաղթականները Ֆրդի պիտի փոխադրւեն. թոյլատրելի չէ նրանց այստեղ մնալը. առանց նայելու նրանց հիւանդ կամ անտէր լինելուն, բոլորին հաւաքեցէք և ուղարկեցէք։ Եթէ ցանկանում են չերթալ կամ չհնազանդւել հրամանի, բռնութիւն և խստութիւն գործ դրէք և գիւղախմբի սահմանից դուրս հանելով ընտանիքով ուղարկեցէք։ Կորուկ կերպով

պահանջում եմ, որ իմացնէք ինձ, թէ քանի տուն ուղարկեցիք։

Խնուսի գայմագամի անունից
18 յունիս 915 Վէհպի

№ 13 Խնուսի գաւառապետին

№ 577/67

Վսեմ տէր!

№ 11574/567

Համաձայն ձեր 13 յունիս 331 թ. և զրութեան, որով հրամայում էիք գիւղախմբի սահմանում գտնուող բոլոր հայ ընտանիքները (շարժելու անկարող եղողներից զատ) տեղահանել, ոստիկաններ ղրկել էի, որպէսզի Եէլփազ գիւղում գտնուող հայ տները փոխադրէին ճանապարհի վրայ գտնուող Սարբլի գիւղը։ Ոստիկանները փոխադրութիւնը մինչև այժմ յետաձգել էին, ասելով թէ կառավարութիւնից այդպէս է հրամայուել իրանց։ Խալիլ-չաւուշցիներից առողջ եղողները ուղարկուել են. հիւանդներն էլ առողջանալիս ուղարկուելու են։

Խալիլ-չաւուշի տեսուչ
15 յունիս 331 (915) Իբրահիմ հագգի

№ 14 Խալիլ-չաւուշի տեսուչին

№ 11574/567

Պրն. տեսուչ!

Ապահով կերպով Վարդօ ուղարկեցէք ձեր գիւղախմբի մէջ գտնուող բոլոր հայ ընտանիքները, որոնց

երկրի ներսեր ուղարկելը անհրաժեշտ է համարուել։ Շարժելու անկարողները յետաձգեցէք և տեղահանութեան մասին պարբերաբար տեղեկութիւն տուէք։

Խնուսի գայմագամի փոխանորդ
13 յունիս 331 (915) Վէհպի

№ 15 Խալիլ-չաւուշի տեսուչին

№ 549

Մինչև որ իսլամ գաղթականներ տեղաւորուին այն հայ գիւղերում, որոնց բնակիչները երկրի ներսն են փոխադրուել, ստիպողաբար յանձնարարուում է ձեզ՝ պաշտօնեաներ նշանակել ստուգելու համար լքած և ցանուած արտերը և թոյլ չտալ, որ ոչ բերքը և ոչ էլ տասանորդական տուրքը կորուստի ենթարկուի։

Խնուսի գայմագամի փոխանորդ
7 յունիս 331 (915) Շեխ (?)

№ 16 Խալիլ-չաւուշի տեսուչին

№ 554

Յանձնարարուում է ձեզ հայ գիւղերում գտնուող արմտիքի հորերը դուրս հանել կանոնաւոր և ապահով կերպով. յետոյ խոնաւութիւնից ազատ մի տուն ամբարի վերածել և արմտիքներն այդտեղ լեցնել տալով՝ կանոնաւոր հսկողութեան տակ առնել. իսկ ընտանիքներին տալ անձ գլուխ 750 գրամ ցորեն, որի հաշիւը կանոնաւոր կերպով պէտք է պահել։

Գայմագամի փոխանորդ
9 յունիս 331 (915) Շեխ (?)

№ 17 (Պատճեն)

Հայերի կրօնափոխութեան և կրօնափոխներ մասնաւոր անշարժ սեփականութեան մասին դրուած որոշումները (որոնցից մի մասը հանրային ապահովութեան տեսչութեան յայտարարութեամբ հաղորդուած էր), իրանց ամբողջութեամբ ահա ուղարկում ենք ձեզ, յանձնարարելով որ ուշադրութիւն դարձնէք նրանց բովանդակութեան համաձայն վարուելու։ 28 հոկտեմբեր 331 (915)։

Յօդ. 1.—Չտեղափոխուող և իրանց վայրերում մնացող հայերի կրօնափոխութիւնն ընդունում է։

Յօդ. 2.—Տեղահանութեան միջոցին ճանապարհին յատուկ հրամանով կանգնեցրուած և կամ տեղահանութիւից ազատուածների կրօնափոխութիւնը էլի ընդունում է՝ ուզում է իրանց բնակավայրը վերադարձուեն, ուզում է նոր բնակավայրում հաստատուեն։

Յօդ. 3.—Վերոյիշեալ պայմաններում կրօնափոխ եղողների գոյքերը վերադարձուում են իրանց, իսկ եթէ մինչ այդ փողի են վերածուած, փողով է վճարում։

Յօդ. 4.—Այն կիներ և աղջիկներ, որոնք տեղահանութեան ճանապարհին կանգնեցուում են և ցանկանում են այդ վայրերի մահմեդականների հետ ամուսնանալ, այդպիսիներին բնակարան տրուում է յիշեալ վայրերում գտնուող լքուած տներից։

Յօդ. 5.—Գիւղաքաղաքով, գիւղով, թաղով և կամ վերջապէս հաւաքական ձևով կրօնափոխ լինելու դիմում եղած պարագային, նրանց կրօնափոխութիւնը կատարուում է այն պայմանով, որ այդպիսիները ցըրուեն իսլամ գիւղերի վրայ, բայց նրանց թիւը մահմեդականների թուի 5 առհարիւրից աւել չպէտք է լինի։

Յօդ. 6.—Այն երեխաները, որոնց թոյլ է տրուում ապրել իրանց բնակավայրերում, այդ երեխաների իրանց ծնողներից ժառանգած գոյքերն ամբողջովին և կամ մասամբ, պարտքերի վճարման յատկացելու դէպքում, նրանց կորցուած սեփականութեան փոխարէն կառավարութեան կողմից մի բան տրուում է այն անշարժ կալուածներից, որոնք արձանագրուել են կառավարութեան անուան։

№ 1192 Խալիլ-չավուշ գիւղախմբի տեսչին
(Գաղտնի է)

Կուսակալութիւնից հասած 15 նոյ. 331 (915) թիւ և № 1010 ծածկագիր հրամանի պատճէնը ահա նոյնութեամբ հաղորդում ենք ձեզ և յանձնարարում ենք շարժուել համաձայն նրա բովանդակութեան։

22 նոյ. 331 (915) Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 18 (Պատճեն)
Գաղտնի է

Մասնաւոր, № 694

1.—Մուշի հիւսիս-արևելքից սկսած՝ մի կողմից Մուրադ գետով և միւս կողմից էլ Վանի լճի հիւսիսային ափով շրջապատուած ընդարձակ տարածութեան մէջ (որը վերջերս թշնամիից վերագրաւուեցաւ) թէև

ոչ մի կանոնաւոր և շէն հայ գիւղ չի մնացել, բայց հոս ու հոն բազմաթիւ կիներ և երեխաներ կան արտերի մէջ պահուրտած. իսկ լեռների մէջ կան աւազակախմբեր, որոնք կայանների զինուորական խմբերի գործունէութիւնը խանգարում են. արդէն նրանք մի քանի անգամ կարել են հեռագրաթելերը և այդ պատճառով քանիները մահուան դատապարտուել են։

2.—Բանակը միշտ յառաջխաղացութեամբ և յարձակումով զբաղած լինելով, չի կարող թիկունքում կատարուող այս դէպքերով զբաղել և կամ իր ուժերը բաժնել։ Հետևաբար յանձնարարուում է՝

1.—Վերագրաւած վայրերում անմիջապէս ստեղծել քաղաքային պաշտօնէութիւն և ժանդարմերիա։

2.—Հայ կիների և երեխաների մասին անել այն կարգադրութիւնը, ինչ որ արել է նմանների մասին։

3.—Աւազակներն ու հրոսախմբերը ժանդարմերիայի և տեղական ուժերի միջոցով շուտով փճացնելու համար մանրակրկիտ խուզարկութիւն կատարել. դիմադրողներին ոչնչացնել, իսկ յանձնուողներին աքսորել։

Խալիլ-չաւուշ գիւղսխմբի տեսչին

Բարձր կուսակալութիւնից հաղորդուած 2 յուլիս 331 (915) և № 571 գրութիւնը ահա հաղորդում ենք ձեզ։

26 յուլիս 331 (915)։ Խնուսի գայմագամ

Իբրահիմ (?)

№ 19 (Պատճէն)

Մասնաւոր, № 681

III զօրաբանակի հրամանատարի աղդարարութեան վրայ յայտնում ենք ձեզ՝ միջոցներ ձեռք առնել, որ երկրի ներսերը փոխադրուող հայերը՝ ճանապարհին ոչ ոսոր ոտնձգութեան չենթարկուին. ասկից զատ՝ թէ իրանց վրայ եղած և թէ տանը թողած բոլոր ապրանքներն ու գոյքերը վերին ուշադրութեամբ պահուին։ Այս մասին թուլութիւնը խիստ կերպով կը պատժուին։

Z.U.K.Z. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. Ս. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI-1922
ИМЕНИ А. МАСИСЯНА
1005
91339

(Պատճէն)

(Հետագիր)։ Տեղի ունեցող այս վարքի կրօնափոխութիւնները ըստ էութեան ոչ պաշտօնական արժէք չունին. ուստի կարիք չկայ կրօնափոխների մասին բացառիկ կարգադրութիւն անել. հետևապէս պէտք է կարուկ կերպով կարգադրել նախորդ յայտարարութեան տրամադրութիւնը և այս կարգի (այստեղ մի բառ չի կարդացուում)... և ժամանակաւոր կրօնափոխութեան կարևորութիւն չպէտք է տալ։

(Պատճէն)

Աղջիկներ և կիներ պահողները պիտի պատժուեն համաձայն նախորդ յայտարարութեան։

Խալիլ-չաուշ գիւղախմբի տեսչին

Պրն տեսուչ!

Կուսակալութիւնից հասած վերադրեալ 19 յուլիս 331 թուակիր երեք կարգ հեռագրերի պատճէնները այս մակագրութեամբ ուղարկում ենք ձեզ և յիշեցնում, որ վարուէք համաձայն նրանց տրամադրութիւնների։

Խնուսի գայմագամ
21 յուլիս 331 (915) Իբրահիմ (?)

№ 20 (Պատճէն)

Պէտք է տեսնել մի կարգ տեղերի գիւղական պահակների (կըր բէքչիլէրի) թերի կազմակերպութիւնը և հնարաւոր եղած չափով կանոնաւորել, և որպէսզի այդ պահակներից ցանկալի արդիւնք ստացուի, մտադրւած ենք պահակների կանոնագրութեան ուելացնել մի քանի բարեփոխւած յօդւածներ։ Ուստի յանձնարարում ենք ձեզ հաղորդել այն եղրակացութիւնները և արդիւնքները, որ ստացել էք մինչև այժմ գոյութիւն ունեցող կանոնագրութեան գործադրութիւնից. նաև հաղորդել ձեր նկատած պակասութիւնները՝ իրանց պատճառաբանութիւններով և ձեր խորհրդածութիւններով մէկտեղ։

№ 1308 Խալիլ-չաուշ գիւղախմբի տեսչին

Ներքին գործերի նախարարի յանձնարարութեամբ բարձր կուսակալութիւնից եկած վերոյիշեալ

8 դեկտ. 331 թիւ և № 1039 գրութեան վերագրեալ պատճէնը ձեզ հաղորդելով, ստիպողաբար պահանջում եմ, որ խնդիրը քննէք և արդիւնքը ձեր նկատողութիւններով մեկտեղ հաղորդէք, որովհետև կուսակալը հեռագրով կրկնել ու պահանջել է։ Ուստի առանց մի րոպէ կորցնելու, յատուկ ոստիկանով ուղարկեցէք ձեր պատասխանը, որպէսզի մատուցեմ կուսակալութեան։

14 դեկտ. 331 Գայմագամ
Իբրահիմ (?)

№ 21 Խալիլ-չաուշ գիւղախմբի տեսչին

Եէլփուզ ուղարկածս քսան տուն գաղթականների բարեկամներից եկած տասնուհինգ տունն էլ հոն տեղաւորեցէք։ Շիւքրի աղայի՝ առանց արտօնութեան այնտեղ լեցրած գազանները դուրս գցեցէք։ Շիւքրի աղան մինչև այժմ մի կարգ անամօթութիւններ անելու է յանդգնել. եթէ խելքը գլխին չհաւաքի և իր ընթացքը չուղղէ, ասացէք որ իրան էլ նոյն վախճանին պիտի ենթարկեմ։

Եէլփուզում այս խայտառակ աղայի պաշտպանութեան տակ մի քանի հայեր են գտնւում. սրանց ամբողջապէս հաւաքելով անմիջապէս ուղարկեցէք կենտրոն։

Այնտեղ ամբարւած երկրագործական գործիքները այնպէս բաժնեցէք գաղթականներին և կարօտեալներին, որ միւս գիւղացիներին էլ բաւականանայ. սկսեցէք գարիները հաւաքել տալ։

22 յուլիս 331 (915) Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 22 Խալիլ-չաւուշի միւդիրին
№ 11622/610

Պրն. տեսուչ։

Որովհետև բանակը մեծ կարիք ունի ուտեստի, ուստի ձեր գիւղախմբի բոլոր ժողովուրդը պարտաւոր է մինչև կալիր սկսելը իրեն պէտք եղածը վերցնել և մնացեալը ծախել կառավարութեան։ Ուստի յայտնեցէք ժողովրդին, որ եթէ ոևէ մէկը չուզենայ իր ցորենը կառավարութեան տալ, գիւղաքաղաքում վաճառուած ատեն գրաւուի։ Հետևաբար ձեզ յանձնարարւում է այս յայտարարութիւնը անելուց յետոյ գնումներ կատարել և պարբերաբար մեզ տեղեկացնել։

3 յուլիս 331 (915) Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 23 № 671 մասնաւոր,

Աստուծոյ ողորմութեամբ վերագրաւուած են Մանագկերտ, Ատիլջէվազ, Ախլաթ, Բուլանըք և Դուքթաղ գաւառները. հատատ յոյս ունենք վերագրաւել նաև Բայազիդի փոխ-կուսակալութիւնը։ Հետևաբար եթէ յիշեալ վայրերի պաշտօնեաներից ձեր կողմ գաղթողներ կան, անմիջապէս ուղարկեցէք իրանց պաշտօնատեղերը. ուղարկեցէք նաև յիշեալ գաւառների ժանդարմայի սպաներին և զինուորներին. իսկ ժողովրդին իմաց տուէք, որ իրանց երկիրները վերանորոգուած են։

Խալիլ-չաւուշի տեսուչին

(Մակագրութիւն)

Կուսակալութիւնից եկած 19 յուլիս 331 թուակիր վերոյիշեալ հեռագիրը սոյն մակագրութեամբ հաղորդում ենք ձեզ։

30 յուլիս 331 (915) Խնուսի գայմագամ

Արաբօ գիւղացի Հաջի Իսմայիլի տղայ Խալէտ էֆէնդիին անմիջապէս ուղարկեցէք կենտրոն։

№ 24 Խալիլ-չաւուշի տեսուչին

Ձեր գիւղախումբ ուղարկեցի Կոնֆոր գիւղացի Մուկտատին և ընկերներին, որոնք յայտնելով թէ հողազուրկ են, խնդրել էին հայ գիւղերի ցանքսերը քաղել։ Նրանց տեղաւորեցէք յիշեալ գիւղերից մէկում և ցանքսերը քաղել տուէք։ Կալի ժամանակ անպայման պէտք է մի պաշտօնեայ նշանակէք, որպէսզի մէկ հատիկ իսկ չկորուի, իսկ իրանց էլ բաժին տուէք. եթէ այս կարգի ուրիշ մարդիկ էլ կան, նրանց մասին էլ նոյն կերպով վերաբերուեցէք և արդիւնքը հաղորդեցէք։

14 յուլիս 331 (915) Խնուսի գայմագամ

№ 25 Խալիլ-չաւուշի տեսուչին

№ 604, մասնաւոր

Վեհափառ Թագաւորը ենթարկուած հիւանդութիւ-

նից կատարելապէս առողջացած լինելու առիթով փախստականների մասին կազմուած է ընդհ. ներման յայտարարութիւն, որի մէկ պատճէնը ներփակ ուղարկում եմ ձեզ։

1 յուլիս 331 (915) Խնուսի գայմագամ

№ 26 (Ներփակ պատճէն)

№ 594

1.—Ներման են արժանանում նրանք, որոնք բռնաբարութիւնից բացի ուրիշ ոճիրներով և յանցանքներով դատապարտուած են և ներկայ օրէնքը հրատարակելիս լրացրել են իրանց դատապարտութեան 2/3 ժամանակամիջոցը։

2.—Անոնք, որոնք մահու պատժով և կամ թէ փոխարինարար ցմահ տաժանակիր աշխատանքով դատապարտուած են, կամ թէ մահուան են դատապարտուել, բայց պատիժը փոխուել է թիապարտութեան, այդպիսիները այս օրէնքից չեն կարող օգտուել։

Վեհ. Թագաւորի ապաքինման առիթով հրատարակուած 21 յունիս 332 թագի տաժամեայ ներման օրէնքը, որը վերաբերում է դատապարտութեան 2/3-ը լրացրած եղողներին, այսու հաղորդում ենք ձեզ, որպէսզի անմիջապէս իմացնէք դատական պաշտօնեաներին։

Խալիլ-չաւուշի տեսչին

Պրն. տեսուչ!

Դատական նախարարութեան տուած տեղեկութեան

վրայ, կուսակալութիւնից եկած 23 յունիս 331 թիւ և № 449 հեռագիրն ու տաժամեայ օրէնքի պատճէնը ներփակ ուղարկում ենք ձեզ, որպէսզի նրա համեմատ գործէք։

Խնուսի գայմագամի փոխանորդ
Շէյխ (?)

24 յունիս 331 (915)

№ 27 Խալիլ-չաւուշի տեսչին

№ 551

Ձեր 2 յունիս 331 թիւ և № 565/55 գրութեան պատասխանն է.—Նրանք, որոնք ճանաչում են իրանց ապրանքները, այդպիսիների ապրանքները ջոկեցէք և տուէք իրանց։

8 յունիս 331 Խնուսի գայմագամի փոխանորդ
Շէյխ (?)

№ 28 (Պատճէն)

Փոխ-սպայ Սաքվէթ էֆէնդին իր կարողութեան չափով վերցրել բերել է գաղթականի տարազ կրող իսլամ ժողովրդի ապրանքները, որոնք լի են մեր ամենալաւ զէնքերով. այս գաղթականները տեսնելն այն աստեն, երբ Խնուսից դէպի Մադրակ էին դառնում թէ Խնուսի միջով և թէ Խնուսի կողքից անցնելով և ուզում էին վերադառնալ իրանց բնակավայրը։ Հին գ ձիաւորի առջևից փախչող այս անպիտանների քովի եղած զէնքերը հաւաքելու համար ամեն կողմ ուժեր ուղարկեցէք և ձեր շրջանի բոլոր զէնքերը հաւաքեցէք։

Խալիլ-չաուշի տեսչին

(Մակագրություն)

Էրզրումի կայանի քննիչի յայտարարության վրայ, կենտրոնի հրամանատարությունից եկած վերոյիշեալ 26 յունիս 331 թիւ և № 818 գրության պատճէնը ուղարկում եմ ձեզ, որպէսզի նրա տրամադրության համաձայն շարժէք։

26 յունիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 29 Խալիլ-չաուշի տեսչին

Մասնաւոր № 580

Արհեստագիտական վարժարանի համար սրանից առաջ ուղարկուած ոմմարի համաձայն մինչև այժմ ինչքան արմտիք հաւաքել է և որտեղ է ամբարուել։ Եթէ դեռ հաւաքուած չէ, մինչև երկու օր հաւաքեցէք և անպատճառ ուղարկելուց յետոյ հանգանակության մասին կենտրոնին տեղեկություն տուէք։

16 յունիս 331 Խնուսի գայմագամի փոխանորդ
Վէհպի

№ 30 Խալիլ-չաուշի տեսչին
№ 552

Ձեր 7 յունիս 331 թուակիր գրության պատասխանն է.—Յիսնապետ Թէլէտ և Հիւսէյն էֆէնդինե-

ը զինուորներին որ կողմն են գնում. այս կողմից ոչ ոք չի անցնում։

8 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ
Շէյխ (?)

№ 31 (Պատճէն)

Իմացուել է, որ մի շարք փախստական զինուորներ թափառում են գիւղերում և այսպիսով դժուարացնում են իրանց պատկանած զօրամասերին միանալու գործը. ուստի պէտք է այս մասին յայտարարություններ և կտրուկ հրամաններ տալ ժանդարմայի պահակատոցներին և գիւղախմբերի տեսուչներին, որպէսզի փախստական զինուորները անմիջապէս ուղարկուեն Խնուսի կայանը։ Փոխադրության ընթացքին Հաջի Էօմեր և Մէսջիդլի գիւղերը պիտի անել հանգստավայր, ուր այդ զինուորներին պէտք է պահել և կերակրել և հնարաւորություն չտալ փախչելու։ Այս մասին Հաջի Էօմեր գիւղախմբի տեսուչին պէտք է յայտարարել։ Ուղարկուող զինուորներին չփախցնելու համար ներփակ ուղարկում ենք ձեզ՝ զօրաբանակի հրամանատարի այս մասին տուած հրամանը։ Խիստ յայտարարություններ արէք՝ որոնց որ պէտք է։

Խալիլ-չաուշի տեսչին

(Մակագրություն)

Կայանի հրամանատարի 8 յունիս 331 թիւ և № 740/8 գրության վերոյիշեալ պատճէնը ուղարկում

ենք ձեզ, որպէսզի նրա արամադրութիւնները գործադրէք։

13 յունիս 331 Խնուսի գայմագամի փոխանորդ
Վէհպի

№ 32 Խալիլ-չաուշի տեսչին

Ձեր 7 յունիս 331 թիւ և № 570/60 գրութեան պատասխանն է.—Ժանդարմայի տասնապետ Հիւսէյնի միջոցով ձեր ուղարկած 7 կոր թաղիքներից 5-ը հասել է. անմիջապէս քննեցէք և իմացէք, թէ միւս երկուքը որտեղ են մնացել։

8 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ
Շէյխ (?)

Յ. Գ.—Հասել են նաև երկու ձիեր, որոնցից մէկը գամբեկ ունի։

(Մակագրութիւն)

Գրւել է, որ յիշեալ երկու թաղիքներն էլ ժանդարմայի հրամանատար Բէհլիւլ բէյի միջոցաւ յանձնւած է Հաֆըզ չաուշին, որմից հարկ եղած ստացականը առնելով պէտք է ուղարկւի։

15 յունիս 331.

№ 33 Խալիլ-չաուշի տեսչին

Մասնաւոր № 578

Որովհետև բանակը շատ կարիք ունի բանջարեղէնների և մրգեղէնների, ուստի ձեզ յանձնարարում ենք պատւիրել ձեր շրջանի գիւղերի բնակիչներին, որ բանջարանոցներ (բոստաններ) մշակեն, բերքերը խնամքով պահպանեն և ինչքան կարելի է քանակը շատացնեն։ Սոիպոդարար յանձնարարում ենք գիւղերի ծերերի ժողովին յայտնել, որ վերոյիշեալ բերքերը պատրաստելու դէպքում կանխիկ փողով պիտի գտնւեն։

15 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ
Վէհպի

№ 34 Խալիլ-չաուշի տեսչին

Մասնաւոր № 598

Ուղարկւեց ձեզ փոխադրական զինւորների ներման օրէնքի պատճէնը։ Այս բարձրագոյն ներումը ամբողջ ժողովրդին հասկացնելու համար՝ համաձայն կասկածելի յանձնարարութեան՝ պէտք է անձամբ պոտիք գիւղերը։ Կտրուկ կերպով հասկացրէք, որ այս ներումը շատ նուիրական է, որ սրանից յետոյ էլ ուրիշ ներում չպիտի լինի և ուստի ժողովուրդը պէտք է անպատճառ օգտւի այս ներումից։ Հասկացրէք նաև, որ օրինական պայմանաժամը լրանալուց յետոյ եթէ դարձեալ գտնւեն այնպիսիներ, որոնք փախչում են իրանց կրօնական և հայրենասիրական պարտականութիւնները կատարելուց, այդպիսիների մասին պէտք է գործադրւի կառավարութեան ամենախիստ որոշումը։ Յամենայն դէպս պէտք է այս ներումից որոշ արդիւնք ձեռք բերել։

25 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ
Շէյխ (?)

№ 35

Խալիլ-չաուշի տեսչին

Մատնաւոր № 585

Իմանում ենք, որ գաղթականներն ու գիւղերի բնիկները փչացնում են ցանքսերը, նկատի ունենալով ներկայումս թէ ժողովրդի և թէ բանակի ունեցած ստիպողական կարիքը, կտրուկ կերպով յանձնարարում ենք ձեզ՝ միջոցներ ձեռք առնել, թոյլ չտալու համար, որ ցանքսերը փչացնեն։

23 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ

Շէյխ (?)

№ 36

(Պատճէն)

1.—Զինուորական պատժական օրենսգրքին բերյաւելուած հրատարակուած 24 յուլիս 330 (914) թուակիր օրէնքով յիշատակուած յանցանքներով ամբաստանուած, ձերբակալուած և դատապարտուած փոքր սպաները, տասնապետները և հասարակ զինուորները, ինչպէս նաև նրանց քաղաքացի մեղսակիցները, ներման են արժանացել՝ վեհ. սուլթանի ապաքինման առիթով։ Հետևաբար այն բոլոր չարձանագրուած կամ փախած զինուորականները, որոնք այս օրէնքի յայտարարելու յաջորդ օրւայ կէսօրից սկսած 30 օրւայ ընթացքում ներկայանում և յանձնւում են, օգտւում են բարձրագոյն ներումից։

2.—Այս օրէնքը գործադրելի է հրատարակման օրից սկսած։

3.—Այս օրէնքի գործադրութիւնը յանձնւած է պատերազմական, ծովային և դատական նախարարներին։

Յայտարարութիւն

Մի ժամանակից ի վեր հիւանդացել էր մեր ամենաողորմած վեհ. սուլթանը, որի ամբողջ և անկասկածելի մտահոգութիւնն է օսմանեան ազգի և մանաւանդ մահմէդական տարրերի մշտնջենական ազատութիւնն ու ապագայ խաղաղութիւնն ու երջանկութիւնն ապահովել։ Այժմ նա բոլորովին առողջացել է և նա, որ ոչ մի բոպէ չի դադարել իր ժողովրդի բարիքի և հանգստութեան մասին մտածելուց, այժմ էլ առողջանալուն պէս մի ապացոյց էլ տւեց իր կայսերական ողորմածութեան։ Նա ընդհանուր ներում յայտարարեց, որը աւետում եմ ձեզ։ Այս մասին կազմւած օրէնքի պատճէնը կը գտնէք վերևում։ Այլևս ամեն ոք պէտք և վազէ իր կրօնական և հայրենասիրական պարտականութիւնը կատարելու. փախստական զինուորները պէտք է միանան իրենց ղօրամասերին. չարձանագրուածները պէտք է դիմեն կառավարութեան։ Պէտք է վստահ լինեն, որ կայսրի ապաքինման առիթով դրւած այս օրէնքը չի նմանում ուրիշներին և երկար չի տևում։ Մա կայսերական ողորմածութեան վերջին շնորհքն է, որ լուսաւորում է ապահովութեան ու երջանկութեան ուղին, որից պէտք է վազելով օգտւել։ Լաւ պէտք է գիտնաք, որ օրինական պայմանաժամը լրանալուց յետոյ օրինական տրամադրութիւնը պիտի գործադրւի տարբեր կերպով և առանց ոչէ թոյլտւութեան։ Ուստի յանձնարարում եմ ձեզ՝ աշխատիլ օգտւել այս վերջին ներումից։

24 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ

Շէյխ (?)

№ 37 Խալիլ-չաուշի տեսուչին

№ 1170 (Ստիպողական է)

Կենտրոնական ամբարները Հաջի-Էօմէր պիտի փոխադրուին. դուք էլ տասանորդական տուրքերից և գնումներից ձեզ մօտ մնացած արմատիքները ժողովրդի միջոցներով ուղղակի փոխադրեցէք Հաջի-Էօմէր. մի ժամւայ ճանապարհը ձրի պէտք է տարուի, իսկ մնացեալ ճանապարհի համար, ամեն մի սօմարի համար՝ ժամին 7 դուրուշ պիտի վճարուի. փոխադրողները արմատիքը Հաջի-Էօմէր հասցրած առեն, պահեստի վարչութիւնից ստացական պիտի առնեն, որը պէտք է բերեն այստեղ՝ իրանց վարձքը ստանալու համար։ Իրողութիւնը այս ձևով յայտնեցէք ժողովրդին և աշխատեցէք մի շաբթւայ ընթացքում վերջացնել։ Վերջին անգամ լինելով ազդարարում եմ ձեզ, որ եթէ աւելորդ ընդդիմախօսութիւններով և անտեղի խորհրդածութիւններով ժամանակ վատնելու լինէք, անմիջապէս պաշտօնանկ պիտի լինէք։

29/8 331 Գայմագամ

№ 38 (Պատճէն)

13 սեպտ. 331 թիւ մաքրագործման օրէնքի 4-րդ յօդւածի համաձայն, լքած սեփականութիւններին տիրող կամ այդ սեփականութիւնների մէջ փոխադրող գաղթականներից պահանջ ունեցողներից անոնք, որ Օսմ. կայսրութեան սահմաններումն են գտնւում, անոնք յիշեալ օրէնքի գործադրութեան դրելուց երկու ամիս յետոյ, իսկ կայսրութիւնից դուրս գտնւողները 4 ամիս յետոյ անձամբ կամ փոխանորդութեամբ պիտի դիմեն կոմիսիաների և իրանց պահանջները պիտի արձանագրել տան ու ստանան. նրանք պարտաւոր են կոմիսիաների գտնւած քաղաքում մի բնակավայր ցուցնել, որպէսզի ամեն տեսակ գրութիւններ կարելի լինի հաղորդել։ Այս ժամանակամիջոցը լրանալուց յետոյ դիմողները չեն կարող ձեռք դնել չբաժանուած և վերջէն մաքրագործւած սեփականութիւնների վրայ։ Ուստի պէտք է այս պարագան հրատարակել, իսկ մինչև մաքրագործումի կոմիսիաների կազմութիւնը եկող ինդրագրերը պէտք է ընդունեն տնտեսական կոմիսիաների կողմից և արձանագրեն ու խնամով պահեն։

(Մակագրութիւն)

№ 1021 Խալիլ-չաուշի տեսուչին

Կուսակալութիւնից եկած 29 սեպտ. 331 թիւ և № 883 հեռագրի վերոգրեալ պատճէնը ուղարկելով ձեզ՝ յանձնարարում ենք վարել նրա տրամադրութեան համաձայն։

3 հոկտ. 331 Խնուսի գայմագամ

№ 39 Խալիլ-չաուշի տեսուչին

№ 600 մասնաւոր

Արհեստագիտական դպրոցի համար կից ցուցակով ձեր գիւղամբին նշանակւած նէբերները մինչև մի շաբաթ անպատճառ ուղարկեցէք։

25 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ

Շէյխ (?)

(Կից ցուցակը)

Գիւղերի անունը	պանիր լիտր	իւղ լիտր	ձաւար կոտ
Զէմբենակ	5	2	5
Մէհմէտ-էմին-քէօմի	2	1	2
Թափօ-քէօմի	2	2	3
Փիշկան	3	2	3
Զալուչա-քէօմի	3	2	3
Մօլլա-դավուտ	4	3	5
Թոնկալ	2	2	2
Զաչկէօ	2	1	2
Դուման	2	2	3
Զամէմա քէօմլէրի	5	5	5
Խալիլ-չաւուշ	5	4	6
Թէրքիշ	2	2	3
Թէմուրջի	4	3	5
Իսքէլէ	4	3	5
Կեավար	4	3	5
Զէլիլի-դէօլ	4	3	5
	53	40	62

№ 40 (Պատճէն)

Կալուածական տուրքերով ապահովուած 5% տոկոսաբեր պարտաթղթերի տոկոսի և դրամագլխի երրորդ մասնավճարի ժամանակը լրանում է 331 թուի նոյեմբերի 30-ին. անոնք, որ այդ պարտաթղթերն ունեն, պիտի ներկայացնեն և փոխարժէքը ստանան։

Ուստի որպէսզի այդ վճարումը ապահովուի, պէտք է նախ հաշուել, թէ գաւառակի մէջ ինչքան պարտաթուղթ է ծախուել. այդ գումարի $^1/_5$-ի վրայ պիտի աւելացնել տոկոսը և գոյացող գումարը 10% աւելիով պիտի հայթայթել (թէկուզ ամէնաէական ծախքերից խնայելով) և 331 թուի նոյեմբերի 4-ից սկսած դրամարկղերնում պատրաստ պիտի պահել։ Իսկ փոխարժէքը վճարելու դէպքում պէտք է կուպոնները 4 տեսակով զբաղեցնել՝ առանց նոմէրներին և արժէքներին դիպչելու։ Եթէ չծակուած կուպոններ հասնեն գանձարան, ուղարկողներից քառապատիկ տուգանք պիտի առնուի։ Ֆինանսական նախարարութեան 19 նոյ. 331 թուի հեռագրի տրամադրութեան համաձայն՝ պէտք է 25 փարայի Մաքթու դրոշմ փակցի այն Բօրդրօների վրայ, որոնք կից գտնուում են հրահանգներին։

№ 1143 Խալիլ-չաւուշի տեսչին
(մակադրութիւն)

Կուսակալութիւնից հասած 15 նոյ. 331 թուի և № 1007 հեռագրի վերոգրեալ պատճէնը ուղարկելով ձեզ՝ յանձնարարում ենք գործադրել նրա տրամադրութիւնը։

16 նոյ. 331 Խնուսի գայմագամ

№ 41 (Պատճէն)

Բուն Խնուսի և Խալիլ-չաւուշ գիւղամբի տասնորդական տուրքերն ու գնումները յատկացուած են

9-րդ զօրաբանակին, իսկ Սէյշէմէզի և Մաղրատ գիւղախմբին յատկացուած է 11-րդ զօրաբանակին. իրենց էլ գրուած է, որ դիմեն ձեզի և ստանան։ Երբ որ կը դիմեն, տուէք և յանձուած քանակը իմացուցէք զօրաբանակի պարենաւորման խորհրդի նախագահին։ Սակայն, որովհետև բանակների փոխադրական միջոցները զբաղուած են իրենց առօրեայ փոխադրութիւններով և դրա համար էլ դեռ անբաւական են և հետևաբար ժամանակ չեն գտնում ուրիշ փոխադրութիւններ կատարելու, վերոյիշեալ արմտիքը տեղական միջոցներով փոխադրել տուէք և այդ կերպով օգնեցէք բանակներին։

№ 1012 Խալիլ-չաւուշի տեսուչին
(մակագրութիւն)

III զօրաբանակի հրամանատարից եկած վերոգրեալ 2 հոկտ. 331 թիւ և № 7212 հեռագրի պատճէնը նոյնութեամբ ձեզ հաղորդելով, յանձնարարում եմ վարուել նրա տրամադրութեան համաձայն։

3 հոկտ. 331 Գայմագամ

№ 42 (Պատճէն)

Այս տարի էլ նոյնութեամբ պիտի գործադրուի այն կանոնագրութիւնը, որը անցեալ տարի կազմուեցաւ և 4 հոկտեմբեր թուակիր հեռագրով հաղորդուեց. այդ կանոնագրութեան համաձայն պէտք է վարուած արտերը ցանել և նորերը հերկել ու ցանել՝ քանի դեռ զօրաշարժը շարունակւում է։ Հասկցուել է, որ անցեալ

տարի քիչ բերք է ստացուել, որովհետև մի կարգ տեղերում լաւ հոգատարութիւն չէ եղել. ուստի յանձնարարում ենք յատուկ ուշադրութիւն դարձնել և պարբերաբար տեղեկացնել նախարարութեան։

№ 1006 Խալիլ-չաւուշի տեսուչին
(մակագրութիւն)

Ներքին գործոց նախարարի ազդարարութեան վրայ կառավարութիւնից եկած կէս հոկտեմբեր 331 թիւ հեռագրի վերոգրեալ պատճէնը ահա հաղորդում ենք ձեզ և յատկապէս պահանջում ենք լիովին դրծադրել տրամադրութիւնը այն հրահանգի, որը անցեալ հոկտեմբերի 16-ին ուղարկեցինք ձեզ՝ յանձնարարելով վերին աստիճան ուշադրութիւն դարձնել աշնանացանքսեր անել տալու հարցին։

3 սեպտ. 331 (915) Գայմագամ

№ 43 (Պատճէն)

Մի կարգ տեղերում ցանքսերի $^{8}/_{10}$-ը քաղուած է և կիսով չափ կալատեղ փոխադրուած է, թէև $^{2}/_{10}$ մասը ծեծուած է միայն. ուստի պէտք է եղանակից օգուտելով կալերը մի բոպէ առաջ վերջացնել. նկատի ունենալով մանաւանդ տասնորդական տուրքերի դանձումի և գնումի անհրաժեշտութիւնը, պէտք է դիշեր ցորեկ աշխատել կալերը վերջացնել։ Այս հրահանգը ուղարկում ենք ձեզ՝ Գ. բանակի հրամանատարի կըրութեան վրայ հիմնուած։

№ 944 Խալիլ-չաուշի տեսուչին

(մակագրութիւն)

Կուսակալութիւնից եկած 20 սեպտ. 331 թիւ և № 825 հեռագրի վերոյիշեալ պատճէնը ուղարկելով ձեզ՝ յանձնարարում ենք գործադրել նրա տրամադրութիւնը։

21 սեպտ. 331 Գայմագամի անունից

զօրամասի հրամանատար՝ Ֆախրի

№ 44 Խնուս գաւառակի կառավարչին

№ 649/140

Յաւօք սրտի պիտի ասել, որ աշնանացանքս անելու մասին ժողովրդին տւածս յորդորները արդիւնք չունեցան, հետևաբար այս կերպով գործ չի տեսնւում։ Գիւղի ժողովրդից ոչ թէ մէկ երկուքը, այլ բոլորն էլ ուտելիք չունին և գանգատւում են, որ եթէ սերմացու չանտան՝ չեն կարողանալու ցանքս անել. ի պատասխան ձեր 28 հոկտ. 331 թիւ գրութեան, յայտնելով ձեզ այս պարագան, սպասում եմ կարգադրութեան։

2 նոյ. 331 Խալիլ-չաուշի տեսուչ

Իբրահիմ-Հագգի

(մակագրութիւն)

Ի՞նչ ես ուզում ասել, ի՞նչ ասել է ուտելիք չունին. բերքը ի՞նչ է եղել. եթէ դուք նրանց սնունդն էլ գնում էք, այդ յարմար բան չէ. սասնորդական տուրքի երեքը վերցրէք, մնացորդը իրենց թողէք. եթէ կան այնպիսիներ, որոնց $^{3}/_{10}$-ից աւելին գրւած է՝ ցուցակը ղրկեցէք. կարգադրեցէք, որ ժողովուրդը սոված չմնայ և այս գործողութիւնը այս կերպով սրբագրեցէք։

3 նոյ. 331 Գայմագամ

Իբրահիմ (?)

№ 45 Դատական նախարարութեան

№ 15 6 միլիոն տոկոս թղթադրամ բաց թողնելու օրենքի պատճենն է

22 զիլհիճէ 1333 և 21 հոկտ. 1331

(«Թագվիմի վէկայի»-ով հրատարակւած է 25 զիլհիճէ 1333-ին և 21 հոկտ. 1331-ին № 2336)

Յօդ. 1.—Ֆինանս. նախարարութիւնը արտօնւած է հանել 6 միլիոն ոսկու թղթադրամ, որի փոխարժէքը ամբողջովին յանձնւած է օսմ. հանրային վարչութեան՝ գերմանական զանձի թղթադրամով։

Յօդ. 2.—Այս պարտաւորիչ թղթադրամները իբրև փող փոխանակել օսմ. կայսրութեան ամէն ծայրում, թէ կառավարութեան և անհատների և թէ ժողովրդի անհատների միջև տելի ունեցող առևտրի մէջ։ Այս պարտաւորութիւն չյարգողները կենթարկւին 1—40 լիրա տուգանքի և կամ 24 ժամից մինչև մէկ ամիս բանտարկութեան։

Յօդ. 3.—Այս թղթափողի արժէքը ամբողջովին օսմ. լիրայով վճարւելու է Պոլսում՝ հաշտութիւն կայանալուց մէկ տարի յետոյ։

Յօդ. 4.—Յօդ. 3-ում նշանակւած ժամանակամիջոցից մինչև երեք տարի չներկայացւած թղթա-

փողերը կորցնելու են իրանց արժէքը՝ յօգուտ գանձարանի։

Յօդ. 5.—Այս օրէնքը գործադրելի է հրատարակուելու օրից սկսած։

Յօդ. 6.—Այս օրէնքի գործադրութիւնը յանձնարարում է ֆինանսական և դատական նախարարներին։

Հրամայում եմ օրինականացնել և պետութեան օրէնքների վրայ աւելացնել այս օրինագիծը, որ նոյնութեամբ ընդունուած է ծերակոյտից և երեսփ. ժողովից։

Մէհմէտ Ռէշատ

Ֆինանս. նախարարի անունից
Թալաաթ

Դատական նախարար — Եսարքոս
Իբրահիմ — Մէհմէտ Սայիտ

(Մակագրութիւն)

№ 1211 Խալիլ-չաւուշի տեսչին

18 նոյ. 331 թիւ և 1022 № գրութեամբ ստացած վերոգրեալ օրէնքը, որ վերաբերում է բաց թողնուած թղթափողերի շրջանառութեան եղանակին, ահա հաղորդում ենք ձեզ. յայտարարեցէք ժողովրդին, որ վարուի նրա տրամադրութեան համաձայն։

26 նոյ 331 Գայմագամ
Իբրահիմ(?)

№ 46 Խալիլ-չաւուշի տեսչին
№ 883

Նախապէս ձեզ ուղարկուած ցուցակով դուք պարտաւոր էիք ձեր շրջանից կառավարութեան համար նպաստ հաւաքել 3038 դուրուշ. բայց մինչև այժմ ոչ մի դուրուշ չուղարկուեց. ձեզնից այս բանը չէի սպասում. սպասում էի, որ դուք լուրջ կերպով պիտի օժանդակէիք, որպէսզի ախոռի ձև ստացած կառավարական պաշտօնատեղին բնակելի վիճակի վերածէի։ Աւելի երկար սպասելը նշանակում է այս յոյսերը փըճացնել. ուստի սպասում եմ, որ ձեր բնածին գործունէութեամբ այս գործը մինչև մի շաբաթ վերջացնէք և ուղարկէք։

12 սեպտ. 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 47 Խալիլ-չաւուշի տեսչին
Մանաւոր № 625

Որովհետև 9-րդ բանակը կենդանիների մեծ կարիք ունի, ուստի հրամայում ենք ձեզ ձեր շրջանի թիւրք գաղթականների և տեղացիների քով գտնուող բոլոր կենդանիները գրաւել և ուղարկել կենտրոնը։ Եթէ այս մասին թուլութիւն և զանցառութիւն ցոյց տալու լինէք, անողորմ և խիստ պատժի պիտի ենթարկուէք։ Այս բանը յայտնում ենք ձեզ՝ աչ թեւի հրամանատարի հրամանի վրայ հիմնուած։

9 յուլիս 331 Գայմագամի անունից
Վէհպի

№ 48 Խալիլ-չաուշի տեսուչին

Մասնաւոր № 629

Ներկայ վիճակի բերումով պիտի կազմակերպուին ամբաշէն գունդեր. ուստի իբր ձրի աշխատողներ՝ ձեր գիւղախմբի համար նշանակուած է 60 մարդ՝ 60 բահով և բրիչով։ Այս մարդկանց մինչև երկու օր հաւաքեցէք գիւղերից և ուղարկեցէք կենտրոն։ Յայտնելով որ այս մասին ցոյց տուելիք անփութութիւնը ամենախիստ պատասխանատուութեան պատճառ պիտի դառնայ, կտրուկ կերպով պահանջում եմ, որ նշանակուած բանուորները բահով և բրիչով միասին ուղարկէք։

11 յուլիս 331 Խնուսի գայմագամի անունից
Վէհպի

№ 49 Խալիլ-չաուշի տեսուչին

№ 842

Կայսերական հրովարտակը հրամայում է գրաւել ժողովրդի և վաճառականների ձեռքում գտնուող արու ոչխարների 15%-ը. ուստի ոչխար համրելու տօմարի համաձայն՝ 9%-ը գրաւելու և կենտրոն ուղարկելու համար տուրք հաւաքող պաշտօնեաները ուղարկուած են։ Մաղաչափ անդամ թոյլտուութիւն և զանցառութիւն ցոյց տուողները անմիջապէս պաշտօնանկ արուելով պիտի յանձնուեն պատերազմական տեսանին։ Այս գործում դուք էլ պէտք է ձեր ջանքերը միացնէք տուրք հաւաքող պաշտօնեաների ջանքերին և մինչև մէկ շաբաթ ոչխարներ ուղարկէք կենտրոնը. հակառակ

պարագային հարկահաւաք պաշտօնեաների մասին նշանակուելիք պատիժը պիտի գործադրուի նաև ձեր մասին։

5 սեպտ. 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 50 (Պատճէն)

Մասնաւոր № 661

Հանգուցեալ Հաֆըզ-Հագգի փաշայի օրով մասնաւոր կազմակերպութիւնը վերջացուած էր. սակայն հասկացուում է, որ տակաւին մարդիկ կան, որ այդ անուան տակ ապրում են։ Բանակի հրամանատարը այդ մարդկանց պիտի կցէ Եագուպ-Զէմիլ գունդին։ Ուստի այդ տեղերը մասնաւոր կազմակերպութեան պատկանող ինչքան մարդ որ կայ, իրանց զէնքերով (ձիաւորներն էլ ձիերով) պարտաւոր են անմիջապէս գալ Էրզրում։ Հակառակ շարժողների մասին պիտի գործադրուի դասալիք զինուորների պատիժը։ Անոնք, որ աչք են փակում այս կարգի մարդկանց ազատ պտտելու դէմ, ենթարկուում են պատասխանատուութեան*)։

---

*) Այս պատճէնի մակագրութիւնը ճեղքուած լինելով, յայտնի չէ, թէ ինչ կազմակերպութեան է ակնարկուում, բայց հաւանական է, որ չէթեների (հրոսախմբերի) կազմակերպութեանն է վերաբերում։
Ծ. Թ.

№ 51 Խալիլ-չաուշի տեսչին

№ 1043

Այսօր 18 զինուոր ուղարկեցի, որ ձեր շրջանում ծառայեցնէք. հարկահաւաք Ըէշիտ և Աքիֆ էֆէնդիներին էլ ուղարկեցի. Աբդուլլահ աղան էլ գալիս է. Խալիտ էֆէնդին էլ այդտեղ է. բոլորդ պիտի աշխատէք միայն արմտիք գրաւելով և ուղարկելով. անցեալ օր տաճս հրահանգը ականջի ետև գցեց. ինձ մի պարտաւորցնէք, որ դիմեմ խստութեան և զօրաղղացնելու։ Հայրենիքի պէտքերին համապատասխան գործունէութիւն ցոյց տուէք և այս գործը մինչև 3—4 օր վերջացրէք. այլապէս կտրուկ կերպով յայտնում եմ, որ ձեզ պաշտօնանկ պիտի անեմ։

8 հոկտ. 331 Գայմագամ
Իբրահիմ(?)

№ 52 Խալիլ-չաուշի տեսչից
№ 11633/618

Հասկացնում է, որ ձեր գիւղախմբի ժողովուրդը վախենալով որ զինուորութեան համար պիտի ձերբակալւի, իր արտերն ու արօտները չի ոռոգում և դրա հետևանքով կանաչուտները դատապարտւած են չորանալու։ Սրանից յետոյ ոչ ոքի մի խանգարէք և վերին աստիճանի խնամք ցոյց տուէք, որ արտերն ու արօտները ոռոգւեն ու քաղւեն։ Այս մասին յորդորեցէք ժողովրդին և միանգամայն աւելացրէք, որ եթէ դրութիւնը առաջւայ պէս շարունակւի և չտիրեն ու

խնամեն իրանց արտերն ու արօտները, այդպիսիները պիտի ենթարկւեն անողորմ ու խիստ պատժի։

4 յուլիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 53 Խալիլ-չաուշի տեսչին

№ 11576/569

Կուսակալութեան հրամանով ձեր շրջանի բոլոր թիւրք գաղթականները պիտի փոխադրւեն Քզի գաւառակը, ուստի յանձնարարւում է յիշեալ գաղթականներին անմիջապէս փոխադրել և արդիւնքը յայտնել։

13 յունիս 331 Խնուսի գայմագամի անունից
Վեհպի

№ 54 Խալիլ-չաուշի տեսչին

Կուսակալը, յենւած 5-րդ շրջանի զօրախմբի բողոքի վրայ, յայտնում է, որ մի շարք գիւղերում քիւրդերը իրանց տներում պահում են հայերին, որոնք վերջ ի վերջոյ անցնում են Թշնամու կողմը և լրտեսութիւն են անում։ Ուստի կտրուկ կերպով պահանջում եմ, որ ձեր գիւղախմբի կասկածելի գիւղերը անակնկալ կերպով խուզարկէք և հայերի հետ միասին կենտրոնը ուղարկեցէք այն քիւրդերին, որոնք իրանց տներում հայեր են պահում. նաև այս հարցում լինէք չափազանց զգոյշ և շրջահայեաց և թոյլ չտաք, որ բանակի յաջողութիւնը խանգարող այս կարգի անտեղի երևոյթները կրկնւեն։

21 յունիս 331 Խնուսի փոխ-գայմագամ
Շէյխ (?)

№ 55 (Պատճեն)

Վերջերս, գաղթականներին էլ զէնքի տակ առնելու պատճառով, բազմաթիւ ընտանիքներ անտէր են մնում։ Թէև օրէնքը տրամադրում է այդ կարգի ընտանիքներին անձ-գլուխ ամսական 30 ղուրուշ տալ, բայց այս բանը պիտի գործադրւի պաշտօնական գործողութիւնները վերջանալուց յետոյ։ Ուստի գաղթականներին յատկացած փողից ապրեցրէք անտէր և աղքատ եղողներին, մինչև որ ռոճիկ նշանակւի։

(Մակագրութիւն)

№ 1025 Խալիլ-չաւուշի տեսուչին

Սրանով հաղորդում ենք կուսակալութիւնից եկած 1 սեպտ. 331 թիւ և № 885 գրութիւնը, որպէսզի նրա տրամադրութեան համաձայն գործէք։

4 հոկտ. 331 Գայմագամ
Իբրահիմ (?)

№ 56 Խալիլ-չաւուշի տեսուչին
№ 494

Լուր է ստացւում, որ ժողովուրդը գաղթում է։ Ստիպողաբար պահանջում եմ երբէք թոյլ չտալ, որ ժողովուրդը սուտ ու սխալ լուրերի պատճառաւ թըշւառանայ։ Գաղթողներին անմիջապէս վերադարձրէք իրենց գիւղերը։ Փախստականներին խիստ կերպով հետապնդէք և ձերբակալէք. իսկ իրանց տներում պահածների մասին գործադրէք օրէնքի տրամադրութիւնը. զինուորացուներին էլ իսկոյն ուղարկեցէք Խնուս։

23 մայիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

(Պատճեն)

Ընդհ. հրամանատարի փոխանորդի ազդարարութեան վրայ բանակի հրամանատարը հրամայում է իտալական հպատակներին դեռ ևս չաքսորել, մինչև որ պարզւի Իտալիայի թշնամական ընթացքը գործնականապէս։

(Գաղտնի է)

№ 57 Խալիլ-չաւուշի տեսուչին
№ 889

Որովհետև փախստական զինուորների ձերբակալման մասին գրած գրութիւններին չէք պատասխանում, դրանից հասկացւում է, որ այդ հարցին կարեւորութիւն չէք տալիս. մինչդեռ ներկայումս սրանից աւելի կարևոր պարտականութիւն չի կարող լինել։ Եթէ դուք դասալիք զինուորներին չձերբակալէք, ամբողջ գնդի զինուորները կը փախչեն և զօրամասերը կը պարպւեն։ Պետութեան և ազգի համար սրանից աւելի ինչ մեծ վնաս կարող է լինել։ Արդեօք այս վիճակի պատասխանատուութիւնը ում վրայ է ընկնում։ Վերջին անգամ լինելով յանձնարարում եմ ձեզ լուրջ կերպով խորհել և ջանք ի գործ դնել ձերբակալելու համար դասալիքներին. իսկ ձեր գործունէու-

թեան մասին ամեն փոշտայով իմաց տուէք մեզ։

12 սեպտ. 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 58 (Պատճէն)
Մասնաւոր № 655

I.—Զօրաբանակների շրջանում գտնւում են բազմաթիւ յետնեալ փախստականներ։

II.—Բանակը մեծ կարիք ունի զինւորների. այս կարիքը փարատելու համար բոլոր զինւորական և քաղաքային պաշտօնեաները դասալիքների ձերբակալութիւնը պէտք է իրենց համար գրաղում և պարտականութիւն համարեն և աշխատին։

III.—Երբ որ փախստական կամ յետամնաց զինւորները գղջալով կը գան ու կը ներկայանան, այդպիսիներին ... (այստեղ մի բառ ճեղքւած է) չանեալով, իսկոյն պէտք է ուղարկել։

IV.—Ձերբակալւածներին պէտք է հէնց իրանց տների առջև կախաղան բարձրացնել։

V.—Թէ պատերազմական շրջանից և թէ թշնամու գրաւած գիւղերից գաղթողներին էլ պէտք է հաւաքել և ուղարկել։

VI.—Այս հարցում ծայրայեղ խստութիւն և գործունէութիւն եմ պահանջում զինւորակոչի պաշտօնեաներից։

Զինւորների ձերբակալման և ուղարկման հարցում զանցառութիւն և թուլութիւն ցոյց տւողները պիտի պատժւին ամենախիստ պատժով։

Խալիլ-չաւուշի տեսուչին
(Մակագրութիւն)

Երրորդ բանակի հրամանատարի ազդարարութեան վրայ Էրզրումի կայանի քննիչի կողմից ուղարկւած վերոգրեալ 16 յուլիս 331 թիւ և 983 № գրութեան պատճէնն ահա հաղորդում եմ ձեզ։ Հակառակ այն բանին, որ հազարաւոր այսպիսի հրամաններ հաղորդւած են ձեզ, բայց ոչ մի գործունէութիւն չի ցոյց տրւել և պարզ կերպով հասկացւել է, որ կարեւորութիւն չի տրւում, վերջնականապէս յայտնում եմ ձեզ՝ ով որ չաշխատի, բանակի հրամանները չը-գործադրէ և դասալիքներին չձերբակալէ, այդպիսիների անունները պիտի յայտնեմ կուսակալութեան և բանակի հրամանատարին, իսկ իրանց էլ պիտի յանձնեմ պատերազմական ատեանին։

17/18 յուլիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 59

Խարբ գիւղախմբի տեսչութեան, (կնիք) Խարբ գիւղխմբ. տեսչ. (կնիք)

Խարբ գիւղախմբի տեսչութեան (կնիք) Խարբ գիւղխմբ. տեսչ. (կնիք)

Իմացայ՝ որ սօրքցի Սէլիմը նորշէնցի Սըմօյ սէֆէրիի քեռին է. այդ պատճառով Սըմօյին ուղարկեցի այդտեղ. թող Դոնօյին և Դաւիթին նրան յանձնեն և

ուղարկեն կառավարութեան, թէ չէ նրանց մասին
կայսերական հրովարտակ եկել է արդէն... հայերի
գլխին եկած դժբաղդութիւնը նրանց գլխին էլ պիտի
դայ։ Եթէ Սէլիմը սրանց բերէ և յանձնէ, կառավա-
րութիւնից ոճիկ պիտի ստանան, հրացան էլ պիտի
ստանան։ Նորշէնցի Ահմոն և սօրբցի Սէլիմը եթէ այս
պարտականութիւնը չկատարեն, Սէլիմին պիտի դա-
տապարտենք։ Յամենայն դէպս թող գործը չյետաձգե-
լով այդ երկուքին ապահով կերպով ուղարկեն Նորշէն
և կամ գիւղախմբի կեդրոնը. իրանց մասին ոչ մի
վատ բան չպիտի լինի։ Հակառակ պարագային երկու
վաշտ զինուոր պիտի դայ, բոլորին էլ պիտի փճացնեն,
ինչպէս արին հայերին։ Ի սէր Աստուծոյ, անպատճառ
երկուքին էլ բերէք, թէ չէ պիտի փճանաք։

27 յունուար 331 (916) Խաթо միւդիրի փոխանորդ
Ահմէտ Համդի
(կնիք)

Խաթо գիւղախմբի տեսչութիւն
(կնիք և ստորագրութիւն)

№ 60 Քեակիդ գիւղում Դաւիթ եւ Դոնիо էֆենդիներին
(Բարեւելուց յետոյ)

Գիտէք թէ ձեզ ինչքան եմ սիրում. Խաթо գիւ-
ղախմբի տեսչի փոխանորդ եմ հիմա. այս պատեհու-
թեամբ ուզում եմ ձեզ մի լաւութիւն անել. եթէ իմ
խօսքիս հետեւէք, ես մտադիր եմ ձեզ կրօնափոխ անել
և ազատ արձակել. մահմեդական դարձողներին ոչէ
ոանձգութիւն չպիտի լինի. եթէ մահմեդական դառ-
նաք, ձեզի ինձ մօտ եմ բերում և ձեզ օգնում եմ։
Լեռան մէջ գտնուելը օգուտ չի բերում. եկէք

յանձնուեցէք. սխալւում էք՝ եթէ իմ այս առաջարկս
մի խարդախութիւն էք համարում։ Այսօր Խաթոյում,
Սարմիում, Մօսում, Շաթայում, Խարբակում և ուրիշ
տեղերում բազմաթիւ հայեր մահմեդականութիւն են
ընդունել և ազատ ապրում են. դուք ինչու անկիւն-
ներում կը մնաք։ Եթէ իմ խօսքս չընդունելով բոլորդ
անձնատուր չլինէք, սխալի մէջ կընկնէք։ Այսօր ձեզ
կատարեալ ազատութիւն է տրուել. արժէքը չէք իմա-
նում. յամենայն դէպս, խօսքիս լսելով, բոլորդ էլ ե-
կէք անձնատուր եղէք։ Պատասխանին սպասում եմ
անհամբեր։ Եթէ պիտի լինի, ես ինքս 5—6 հոգով
գալիս եմ այդտեղ և ձեզ բոլորիդ մահմեդական դարձ-
նելուց յետոյ ուրախութեամբ վերադառնում ենք գիւ-
ղախմբի կեդրոնը։

17 յունուար 331 (916) Խաթо գիւղախմբ. փոխ-տեսուչ
Սասունի գլխաւոր քարտուղար
Ահմէտ Համդի

Պատասխանը իսկոյն ղրեկցէք. յայտնեցէք նաև,
թէ ինչ մտքի էք։

Զիլանցի մօլլա Մուստաֆայի տղան՝ Ապտիւլ-
Զաֆարը ասում է, որ իր ժամացոյցը Գէորգի մօտն
է. այդ ժամացոյցն էլ ուղարկեցէք։

Ձեր ապրուստը պիտի հայթայթենք և տանը
լքած գոյքերից. այս էլ պիտի իմանաք։

№ 61 (Պատեհն)

1296—1311 թուերին ծնածները (ինչ ձևով էլ
ապրելիս լինեն օսմ. կայրութեան մէջ), երբ զինուո-
րական ծառայութիւն անելու ընդունակութիւն ունեն՝

զէնքի տակ պիտի առնուին. գաղթական համարելով զէնքի տակ պիտի առնեն նաև այն բոլոր մահմեդականները, որոնք գաղթել են մեր երկիրը և որոնց հպատակութեան հարցը կասկածելի է։ Օտար դեսպանատների և հիւպատոսարանների պաշտօնեաներն ու ծառայողները (որոնք ըստ օրինքի բացառութիւն են կազմում) պիտի յետաձգուին՝ անկախ նրանց տարիքից։ Սրանց միջից՝ մանաւանդ մեր լքած երկիրների ժողովրդից՝ եթէ գտնուեն այնպիսիներ, որոնք կը ցանկանան դրամատալ զինուորութիւն անելու փոխարէն, այդպիսիներին պիտի համարել անվարժ զինուորներ և նրանց փողերը պիտի ընդունել՝ համաձայն 21 փետրուար 330 թուի օրէնքին։ Այս մասին հրաման տրուած է զօրականի հրամանատարին։ Այս հրամանը վերաբերում է նաև այն վայրերին, ուր կայ զինուորական կազմակերպութիւն։ Այս կարգադրութիւնները եղել են պատերազմական նախարարութեան կողմից։ Հետևաբար քաղաքային պաշտօնեաներն էլ պէտք է աշխատեն կանչել և հաւաքել այնպիսիներին, որոնք վերոյիշեալ պայմաններում են գտնուում։

№ 1281 Խալիլ-չաուշի տեսչին
(Մակագրութիւն)

Կառավարութիւնից եկած վերոգրեալ 3 զեկտ. և № 1074 հեռագիրը ձեզ հաղորդելով՝ յանձնարարուր ենք գործել համաձայն նրա տրամադրութեան։
6 զեկտ. 331 Խնուսի գայմագամ

№ 62 Խալիլ-չաուշի տեսչին
Մասնաւոր № 685
(Շատ կարևոր է)

1.—Ձեր գիւղախմբում քանի՞ Ջրաղացպան կայ. քանի՞ անձից բաղկացած ընտանիք ունեն. սոնք բոլորն էլ պէ՞տք են. պէտք եղածից աւելիները քանի՞ հոգի են։

2.—Ինչ պատճառով և առիթով էլ տեղահանութիւնը յետաձգուած լինի, այժմ ոչ մի հայ չպիտի մնայ. ընդունուած որոշումների համաձայն բոլորն էլ պիտի տեղահանուեն. նրանց հանդէպ թուլութիւն կամ պաշտպանութիւն եթէ նկատուի, հաղորդուած ծածկագիր հրամանների տրամադրութիւնը խստոյն պիտի գործադրուի։

3.—Սրա-նրա մօտ ինչքան ծածկուած հայեր որ կան, բոլորը պէտք է հաւաքել և նրանց պահողների հետ միասին ուղարկել կենտրոն։

4.—Պարտաւոր էք խոստանալ, որ մինչև երկու օր ամբողջովին պիտի մաքրէք։
23 յուլիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 63 (Պատճէն)
Մասնաւոր № 702

Մահմեդական գաղթականները ամբողջովին (մինչև 312 թուի ծնուածները) զէնքի տակ պիտի առնուեն. այս գաղթականների հոդերի վրայ գտնուող ոչ մահմեդականներն էլ հաւաքելով պիտի ուղարկեն

ճանապարհ շինող վաշտերի մէջ։ Այս կարգադրութիւնը եղել է բանակի հրամանատարի կողմից. ուստի մահմեդական գաղթականներին ուղարկեցէք զինուորական վարժութեան վայրը, իսկ ոչ մահմեդականներին էլ ճամբայ շինող վաշտերը։ Արդիւնքը տեղեկացրէք։

Խալիլ-չաւուշի տեսուչին
(Մակագրութիւն)

Հաղորդելով ձեզ 28-րդ կիսաբանակի (դիւիզիա) զինուորակոչի վարչութիւնից եկած և Խնուսի զինուորակոչի վարչութիւնից մակագրութեամբ հաղորդուած վերոգրեալ 26 յուլիս 331 թուակիր հեռագիրը, յանձնարարում ենք առանձին ջանք ի գործ դնել ձերբակալութեան գործում։

27 յուլիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 64 Խալիլ-չաւուշի տեսչին
Մասնաւոր № 691

Լսւում է, որ քրդական հեծեալ գունդերի զինուորները, զօրամասերից փախչելով, իրանց գիւղերն են դարձել, պատրւակելով, թէ կառավարութիւնը՝ պարպւած գիւղերի հողերը աւել է ժողովրդին. մինչդեռ լքւած հողերից Ալաշկերտի և ուրիշ գաւառների հողերը տրւել են անաէր գաղթականներին և կառավարութիւնը երբէք այդպիսի հրաման չի տւել։ Հետևաբար անհրաժեշտ է խստոյն ձերբակալել և իրանց զօրամասերն ուղարկել այն բոլոր քրդերին, որոնք, թէ վերոյիշեալ պատճառով և թէ, ինչպէս առաջ էլ եղել է, իրանց զօրամասերից փախչելով այժմ տներումն են գտնւում։

23 յուլիս 331 Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 65 Խալիլ-չաւուշի տեսուչին

Կառավարութեան հետ վերջացրի գնումների հաշիւը, ինչպէս նաև տասնորդական տուրքերի։ Այս տարի թէև տասնորդական տուրքը ժողովրդի վրայ է ճնացել, բայց ելևմտական պաշտօնատնից մեզ հրամայւած է խստոյն գիւղախումբը մեկնել. ցուցակները պիտի կազմեմ և երկրորդ օրը երեսս պիտի քսեմ ձեր ոտքի հողին*)։ Գիւղացոց ձեռքում գտնւող մեծաքանակ ստացականների հաշիւն էլ տեսայ մթերքի բիւրօի հետ և բոլորն էլ արձանագրել տւի։ Գիւղացիներին հաշւետեսութեան կանչելն էլ այն նպատակն ունի, որ անցեալ 330 թւին զինուորական մասերի կողմից ժողովրդին տրւած ստացականները արձանագրւեն պատերազմական տուրքի կոմիսիաների կողմից։ Ես, հասկնալով որ ձեր գիւղախմբից միայն Մալսոր գիւղն ունի այդ կարգի ստացականներ, դրանք արձանագրել տւի։ Միւս գիւղացիների հաշիւներն էլ քննեցին. այս տարի իբր պատերազմական տուրք առնւած ոչխարների արձանագրութիւնը պիտի կազմւի։ Մալ-միւդիրն այս մասին հրամայեց, որ

*) Այսինքն ձեզ մօտ պիտի գամ։
Ծ. Թ.

հարկահաւաքների տուած ցուցակների համաձայն այդ տրձանագրութիւնները պիտի կազմեն գիւղ առ գիւղ և ի զուր տեղ ուրիշներին չպիտի զբաղեցնեն։ Այլևս ուրիշ հաշիւներ չեն մնում։

Գալով լուրերին, հաղորդեմ քեզ, որ Շեխ-Սիւնուսին և Թարապլուզի յեղափոխականները մաքրել են Թարապլուզի ծովափերը իտալացիներից. իսկ անգլիացիներից գրաւել են Ադէն քաղաքը։ «Համադանում պատրաստուել է յեղափոխականների մի մեծ բանակ, որ մեկնել է օգնելու Բաղդադի յեղափոխականներին։ Հնդկաստանի մահմեդականներն ու Աֆղանիստանի ցեղերը բոլորը միասին սրբազան պատերազմի դրօշը բռնելով պատերազմում են մեր թշնամիների դէմ. վերջապէս պարծանքով յայտնում եմ, որ այժմ մեզ համար մեծ յաղթութիւնների լուրեր կան։

Ձեր հրամայածը ուղարկեցի Աբիֆ էֆէնդիի հետ։ Խնդրում եմ ձեր համակրութեան շարունակութիւնը։

8 դեկտ. 331 Մահմատ-Սէյտի

№ 66

Ասի եւ Բիւսմէթ գիւղերում գտնուող խուրցի Դաւիթ, Տօնօ եւ Պետրոս էֆէնդիներուն եւ ադանեցուն

Յարգեալ կամ անյարգեալ բարեկամներ!

Անշուշտ լսած և հասկցած կը լինէք, թէ այս տարի ինչ վերաբերմունք ցոյց տուի հայերի հանդէպ. հետևաբար ինչ էլ լինելու է՝ թող լինի, փառք Աստուծոյ, մինչև այժմ ոչ ոքի վատութիւն չարի. կարծում եմ, որ դուք էլ այդ բանը հաստատում էք. դուք մինչև քրբ այդ տեղերը պիտի մնաք։ Անցեալ օր կուսակալութիւնից եկած և նիրքին գործոց նախարարութիւնից հաղորդած մի հեռագրում կարուկ կերպով հրամայւած էր հետևեալը.—«Փախստական հայերը եթէ գան և կառավարութեան յանձնուեն ու կրօնափոխ լինեն, անոնց կրօնափոխութիւնը պիտի ընդունուի։ Նաև եթէ աղքատ դասակարգից են և մահմեդականութիւնը չեն ուզում ընդունել, այդպիսիներն էլ պիտի պաշտպանուեն ու բնակեցուեն»։ Այս հեռագիրը ես անձամբ կարդացի։ Յետոյ երկու հեռագիրներ էլ եկան միևնոյն հարցը հաստատեցին։ Սրա հետ մէկտեղ Մէլֆունի տեսուչ և մեր գաւառապետի փոխանորդ Հիդայէթ էֆէնդիներն էլ, թէ յանուն կառավարութեան և թէ յանուն իրենց պատուի, ինձ լիովին վստահացրել են և ես էլ կատարելապէս վստահացել եմ։ Այժմ արդէն առիթը ներկայացել է և այս առիթը միշտ ձեռք չի ընկնում։ Այս նամակը ձեզ հասնելուն պէս՝ առանց մի րոպէ կորսնցնելու հաւաքեցէք այդտեղ գտնուող բոլոր հայերին և իսկոյն եկէք այս կողմը. Աստուծոյ ողորմութեամբ պիտի ազատուէք. այս պատեհութիւնը մի փախցնէք, եթէ փախցնէք, մեծապէս պիտի զղջաք։ Վստահ եղէք, որ եթէ չգաք ու չհանձնուէք, կառավարութիւնը այդ տեղումն էլ ձեզ պիտի փճացնի։ Այս ձեռնարկը արել եմ ինքնաբերաբար և Աստուծոյ խաթրի համար։ Այնուամենայնիւ աշխարհն էլ չմոռնանք. էհ աշխարհք է. լեռը լեռան կարիք չի զգում, մարդը մարդուն զգում է։ Ահա այս դաղափարով ձեռնարկել եմ այս բարի գործին, որովհետև մինչև այժմ ոչ հայերի սպանութեան և ոչ նրանց գոյքերի կողոպուտին չխառնուեցի։ Բայց հիմա, որովհետև ուժեղ գը-

բաւական եմ ստացել, ձեռնարկել եմ այս գործին։ Դուք պէտք է պատեհութիւնը չփախցնէք և այդ կողմ գտնուող բոլոր հայերին հաւաքելով բերէք։ Եթէ այս ծառայութիւնը պիտի անէք, մի բոպէ առաջ ինձ իմացրէք։ Ես սպասում եմ ձեր պատասխանին, որպէս զի գնահատական եղանակով և ծառայութիւնն ու ջանքը ներկայացնեմ գաւառապետին։ Եթէ չէք վստահանում, եկէք Բալու գիւղը՝ այնտեղ մի անգամ տեսնուենք։ Բարձրեալն Աստուծոյ ողորմութեամբ և շնորհով այս բանը ձեզ համար շատ լաւ պիտի լինի։ Այս պատեհութիւնը մէկ էլ ձեռք չի անցնում, իսկ կառավարութիւնը խիստ կարգադրութեան պիտի ձեռնարկէ, իսկ այդ ժամանակ ղղջալը օգուտ չի անում։ Ահա իրողութիւնը այս է. պատուով վստահացնում եմ ձեզ, որ իրողութիւնը այս է. ամեն մարդ թող իր խղճով դատի. աղքատների և թշուառների արիւնը մի մտնէք։ Բարևներս։

9 յունվար 331 (916) — Սասունի նախկին միւֆթին Մէհմէդ-Սաբրի (կնիք)

№ 67 (Պատճէն)

Յօդ 1.—Զօրաշարժ յայտարարելուց յետոյ ըզղացած պահանջի վրայ զինուորական մարմինը պիտի յայտնէ, թէ պատերազմական տուրքը ո՞րտեղերից պէտք է գանձել։

Յօդ 2.—Այն վայրերում, ուր որոշւում է պատերազմական տուրք գանձել, պիտի կազմւի մէկ պատերազմական տուրքի կոմիսիա, որին պիտի մասնակցեն այդ տեղի ամենամեծ քաղաքային և ֆինանսական պաշտօնեաները, զինուորականութեան ներկայացուցիչները (և եթէ սա չկայ՝ ժանդարմայի հրամանատարը փոխարինելու է), վարչական ժողովի և քաղաքապետութեան մէկ-մէկ անդամ ներկայացուցիչները։ Այս կոմիսիան ժողովրդի կարիքի չափով ուտեստ թողնելով ժողովրդին, մնացեալը պիտի գրաւէ և գրաւածների փոխարէն հաւաքական ստորագրութեամբ ստացական պիտի տայ։

Յօդ 3.—Այն վայրերում, ուր հրամայւում է պատերազմական տուրք գանձել, այդ վայրերի ամենամեծ քաղաքային պաշտօնեան իսկոյն մի կոմիսիա պիտի կազմէ վարչական ժողովի, քաղաքապետարանի և վաճառականական սենեակի անդամներից և այդ կոմիսիան տեղական արժէքի համաձայն տաքսա պիտի նշանակէ բոլոր պիտոյքների համար և այդ ցուցակը անձնական կնիքով կնքելով պիտի յանձնէ տեղական իշխանութեան։

Յօդ 4.—Վաճառականներին, ժողովրդին և արհեստաւորներին տրւելիք հաւաքական ստացականներով առնուած ապրանքի արժէքը պիտի հաշւել համաձայն գնահատութեան ցուցակի, և այդ գումարը պիտի մտցնել զօրաշարժին յաջորդող տարւայ բիւդջէի մէջ և վճարւել։

Յօդ 5.—Այս օրէնքը գործադրելի է հրատարակման օրից սկսած։

Յօդ 6.—Այս օրէնքի գործադրութիւնը յանձնւած է պատերազմական նախարարին։

Ընդհանուր ժողովի 20 յուլիս 330 (914)-ի նիստում բարեփոխելով ընդունել է այս առժամեայ օ-

ըէնքը, որ կազմուած է գործադիր իշխանութեան կողմից և առժամապէս գործադրութեան յանձնուած։

Հրամայում եմ պետութեան օրէնքների վրայ աւելացնել այս օրէնքն էլ, որ ընդունուել է երեսփ. ժողովից և ծերակոյտից։

Մէհմէտ-Ռէշատ

Խալիլ-Չաուշի տեսչին

№ 7033/1090 (Մակագրութիւն)

Կուսակալութիւնից հաղորդուած վերոգրեալ օրէնքի պատճէնը հաղորդելով ձեզ, յանձնարարում ենք վարուել նրա տրամադրութեան համաձայն

22 օգոստ, 330 Խնուսի գայմագամ
(1914) Իբրահիմ (?)

№ 68

Հրահանգ՝ որի համաձայն պէտք է գործեն պատերազմական տուրքի կոմիսիաները արմտիք եւ ուտեստ հաւաքելու գործում

№ 7037/1095

Յօդ. 1.—Ինչպէս որ պատերազմական տուրքի օրէնքի II յօդուածում յիշուած է, կոմիսիան պէտք է ժողովրդին բաւականաչափ ուտեստ թողնէ և մնացեալը առնէ փոխարէն մաղբաթա (հաւաքական ստորագրութեամբ ստացական) տալով։ Թէև ցանկալի է, որ այս առնելու և ստանալու գործողութիւնը կատարուի ժողովրդի համաձայնութեամբ, բայց այս բանը չլինելու դէպքում՝ զսպիչ ոյժ պիտի գործածել։

Յօդուած 2.—Այս տուրքերը ժողովրդի վրայ բաժնելիս նախ պիտի նկատի ունենալ հարուստներին, ապա միջին դասակարգին և ապա հասարակ ժողովրդին. բայց բաժանումը պիտի լինի արդարութեան սկզբունքով, որպէսզի ժողովրդին զիջողութիւն չլինի. միաժամանակ խիստ անհրաժեշտ է զգուշանալ անտեղի պաշտպանութիւնից և կողմնապահութիւնից։

Յօդուած 3.—Եթէ կոմիսիան պէտք տեսնէ զսպիչ ուժի դիմելու, ոստիկանութիւնը և ժանդարմիան պարտաւոր են անյապաղ օգնել նրան։

Յօդուած 4.—Կոմիսիայի կողմից հաւաքուած ուտեստը պէտք է տեղափոխուի կայարան կամ նաւահանգիստները, կամ թէ մի մօտիկ տեղում ապահով կերպով պէտք է ամբարուի։ Ամբարի պահպանութիւնը պիտի յանձնուի տեղական ժանդարմիային, եթէ հոն զինուոր չի գտնուում։ Բայց որովհետև ամբողջ հաշիւների պատասխանատուութիւնը ընկնում է կոմիսիայի վրայ, ուստի ամբարի ել և մտից հաշիւը նա պէտք է կարդադրէ։

Յօդուած 5.—Կոմիսիան ամեն օր կանոնաւոր տոմարով պէտք է արձանագրէ, թէ ամբարում որ օրը ինչքան և ինչ տեսակ մթերք է ամբարել. դարձեալ որ օրը՝ որի հրամանով, ինչ միջոցով, ուր և ինչքան և ինչ տեսակ մթերք է բաց թողնուել։

Յօդուած 6.—Իսկ շնչաւոր կենդանիներ հաւաքուած դէպքում պէտք է նրանց կնքել անջինջ կնիքներով և նշաններով. ապա կայարանի և կամ նաւահանգստի մօտիկ գոմերում փակել՝ առանց տէրերի հա-

մաձայնութիւնը նկատի ունենալով. սակայն պէտք է զրկողութիւն չկատարել և մի գին նշանակելով փոխարէնը ստացական տալ, յետոյ բոլորը միացնելով տմբարներից կերակրել նրանց։

Յօդուած 7.—Փոխադրութեան ժամանակ ուտեստները պէտք է լեցնել պարկերի մէջ, բերանները խնամքով կարել և և եթէ կարելի է կապարով կամ մեղրամոմով կնքել։ Իսկ անդուկով ուղարկելու դէպքում պէտք է ուշադրութիւն դարձնել, որ անդուկը ամուր լինի, առարկաները լաւ տեղաւորուեն և չփչանան։ Իսկ ողջ կենդանիներ ուղարկելիս տեղի հեռաւորութեան համաձայն պաշտօնեաներ պիտի նշանակել և անասունների ուտեստն էլ յանձնել այս պաշտօնեաներին։

Յօդուած 8.—Կոմիսիոն պաշտօնեաներին մթերք և կամ անասուն յանձնելիս պատճէնը ներփակ գտնուող գրութեամբ պիտի յանձնէ և պաշտօնեայից էլ անձնական մուրհակ պէտք է առնէ։ Փոխադրութեան պաշտօնեան մթերքը պարտաւոր է հասցնել և իր ձեռքում գտնուող գրութիւնը այնտեղ կնքել տալով պիտի վերադարձնէ կոմիսիային և այդ ժամանակ ետ ստանայ իր տուած մուրհակը։

Յօդուած 9.—Փոխադրութեան պաշտօնեան պարտաւոր է ճանապարհին դիմել ամեն միջոցի՝ ապահովելու փոխադրութիւնը. հակառակ պարագային, եթէ կորուստ պատահի, ինքը դատարանի պիտի յանձնուի։

Յօդուած 10.—Փոխադրութեան միջոցին եթէ կամքից անկախ կորուստներ և կենդանիների մահեր պատահելու լինեն, փոխադրութեան պաշտօնեան պար-

տաւոր է այդ բանը իր փաստերով ըստ օրինի արձանագրել և վերադարձին հաշիւ տալ կոմիսիային։

Յօդուած 11.—Փոխադրութեան ընթացքին եթէ օդի պատճառով և կամ թէ փոխադրութեան միջոցները աւելացնելու կամ փոփոխելու ստիպողականութիւնով պէտք լինի խանների կամ գիւղերի մէջ գիշերել, փոխադրութեան պաշտօնեաները կարող են գիւղապետի ժողովից և ժանդարմների կայանից, ինչպէս նաև տեղական իշխանութիւնից, օգնութիւն պահանջել։ Այս պահանջը իսկոյն պիտի գործադրուի։

Յօդուած 12.—Գաւառակի կոմիսիաները կարող են յարաբերել փոխ-կուսակալութեան հետ, փոխ-կուսակալութեան (լիվա) կոմիսիաները կուսակալութեան, իսկ այս վերջինի կոմիսիաները ուղղակի պատերազմական նախարարութեան հետ։ Իսկ փոխադրութեան գործի մասին էլ Իզմիրի, Բանդրմայի և Պոլսի ընդհանուր ամբարների տեսուչների հետ կարող են բանակցել։

Յօդուած 13.—Անոնք, որ կոմիսիայի արդար կարգադրութիւններին չենթարկուեն, կամ իրենց մթերքը և այլն պահեն ու ծածկեն, կամ խարդախութեամբ ու կեղծիքով ուրիշի քով գրաւ դնեն, այդպիսիները պիտի համարուեն յանցաւոր և իբրև զինուորական հարցում խարդախութիւն անողներ պիտի յանձնուեն դատարանին՝ յանցանքի համեմատ իրանց պատիժը կրելու համար։

Խալիլ-չաուշի տեսուչին

(Մակագրություն)

Պատերազմական տուրքի կոմիսիաների պարտականությունը որոշող վերոգրեալ օրէնքի պատճէնը ձեզ հաղորդելով, յանձնարարում ենք ձեր գործողությունները յարմարեցնել նրա տրամադրություններին։

23 օգոստոս 330 (914) Խնուսի գայմագամ
Իբրահիմ (?)

№ 69 Խնուս գաւառի գաւառապետին
№ 686/177

Այն լուրը, թէ բասէնները ընկել են և թշնամին մօտեցել է Երզրումի Կիւրջի բօղազին, մեծ յուզում է առաջ բերել ժողովրդի մէջ. ամեն ոք ուզում է փախչել և իր ընտանիքը ազատել. խնդրում եմ յայտնել, թէ ինչ կարգադրություն պիտի լինի։

4 յունուար 331 (916) Խալիլ-չաուշի տեսուչ
Իբրահիմ Հագգի

(Մակագրություն)

Այդ լուրերը բոլորովին սխալ են. տասն օր տեւող արիւնալի կռուից յետոյ մեծ կորուստ ենք պատճառել թշնամուն։ Այսօր թէև մի գրությամբ յայտնել է, որ ռազմական տեսակէտով մեր բանակը քաշւել է Երզրումի բերդը, բայց պարզ է, որ թշնամին կանգնեցած է Հասան-կալէից և մինչև իսկ Քէօփրիքէօյից շատ հեռուն, այնպէս որ մեր բանակը

գտնւում է հին վիճակում։ Բանակի կենտրոնը Հասան կալուն է։ Անցեալ տարի էլ ես ձեզի հրամայել էի այսպիսի սուտ լուրեր տարածողներին յանձնել պատերազմական ատեանին. էլի չէք անում։ Հիմակւայ միակ պարտականությունը ուտեստ հասցնելն է։ Իմ պահանջածս մարդկանց, ուտելիքը և այլն իսկոյն ուղարկեցէք. սպասում եմ մինչև վաղը՝ կէսօրին։ Երբ պէտք լինի՝ ես ձեզ տեղեկություններ կը տամ. դուք կատարեալ լրջությամբ ձեր հայրենասիրական և կրօնական պարտականությունը կատարեցէք։ Այժմ ամենամեծ պարտականությունը, կրկնում եմ, ուտելիք ուղարկելն է։

Գայմագամ
Իբրահիմ (?)

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Ազգ. ուղղայ. Գրադարան
7/XI-1922
Ամբողջ. Ա. Մաս
Ա. Մ. ԱՍԻՄԱՆ

1

Հայաստանի Ազգային գրադարան
NL0421444

15645